

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ARTICLE DE FOND PAGE

ՀԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Կուսակա՛ն տարին . 97

Djanachian P. M. - L'Année Mariale . 97

ԿՐՕՆԱԿԱՆ

RELIGION

Ն. Ս. ՊԻՈՍ ԺԲ ՍՐԲԶ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ՇՐՋԱՆԵՐԿԱՆ Ս. ԿՈՒՆԻ ԱՆՈՐԱՏ ՅՂՈՒԹԻԱՆ ՀՈՋԱԿԻՄԱՆ Ա. ՂԱՐԱՊԱՐԺԻՆ ԱՌԹԻՆ. (ԹՐԳՄԻ. ԳԵՐԱՎ. ՍՐԱՎԻՆՈՎ. ՈՒՆԴԱՆԻ, ՐՆՊԶ. ԱՐՔԱՆՋՅՐ ՄԻԹԻԹ. ՄԻՔԱՆՈՒԹԻԱՆ) . 102

Lettre encyclique de S. S. Pie XII pour l'Année Mariale, à l'occasion du Ier centenaire de la proclamation du dogme de l'Immaculée Conception (trad. par le R. P. Serapion Dr. Oulouhodjian, Abbé Gen. de la Congr. Mekithariste) 102

ՊԵՆՆԵՆԻԱՆ Հ. ՅՈՎԱԶԻՔ. - Ս. ԳՐԻԳՐ ՆԱՐԵԿԱՅԻ և Ս. ԿՅՈՐԵ 117

Behensilian P. Joseph. - St. Grégoire de Narek et la Sainte Vierge 117

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Աստուածամոր անհամեմատ երգիչը 139

Hovhannessian P. Vahan. - L'incomparable poète de la Mère de Dieu 139

ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ. - Մեր Նախնայ հաւատքը Տերամոր Անարատ Յղութեան մասին 155

Der Nersessian P. Nerses. - La foi de nos ancêtres sur l'Immaculée Conception de la Ste Vierge 155

ՀՆԱԹՈՍԱԿԱՆ

ARCHEOLOGIE

ՏԵՐ ՂԱԶԱՐԻԱՆ ԲԺ. Յ. - Ս. Աստուածածնի նուիրումը Վանքի կղզիների մէջ 125

Der Ghazarian Dr. H. - Les monastères de Cilicie dédiés à la Mère de Dieu. 125

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

PHILOLOGIE

ԶՐԱՔԵԱՆ Հ. ՔԵՐՈՎԻԷ. - Ս. Աստուածածին Հայ ճառերու մէջ 145

Tcherakian P. Chérubin. - La Mère de Dieu dans les homélies arméniennes . 145

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

BEAUX ARTS

ՏՈՅԵԱՆ Հ. ՂԵՆՈՆԻ. - Միթիար Արքանճար երաժշտ (Ս. ԿՅՈՐԵՆ ՆՈՒՐՈՒՄԸ ՀԱՐԱԿԱՆ ՆԵՐՈՎ) 129

Dayan P. Léonce. - L'Abbé Mekithar musicien (avec les hymnes dédiés à la Ste Vierge) 129

ԳՐԱԿԱՆ

LITTERATURE

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Կուսակա՛ն Քնար. - (Քանապոսի ծովափնի նուիրումը Ս. ԿՅՈՐԵ) 114-116

Hovhannessian P. Vahan. - «Lyre Mariale». (Poésies dédiées à la Sainte Vierge) 114-116

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՄԻՔԱՅԻԼ. - Անմահ ծաղիկ. 138

Hovhannessian P. Michel. - Fleure incomparable 138

ՀԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Արտաքսուհ . 143

Djanachian P. M. - Expulsion 143

» » » - Արուսեակ զուարթարար 144

» » » - Etoile consolatrice . 144

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia.
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia

ԲԱՉՄԱՎԵՊ

ԲԱՅԱՌԻԿ ԹԻՒ

ՆՈՒՐՈՒՄ

Ս. ԿՈՅՍԻՆ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈՋԱԿՄԱՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԱԴԱՐՁԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ԿՈՒՍԱԿԱՆ կամ Մարիամու տարի հրաշակում է եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան կողմէն՝ ներկայ տարին: Ու ի՛նչ աւելի գեղեցիկ քան Մայիսի ժպիտներուն եւ ներդաշնակութիւններուն մէջ միանալ այս սխրալի յիշատակին ու հրաշքի մեր ընթերցողները ապրելու հոգեկան գմայլելի պահեր Ս. Կոյսին գերազանց առանձնաշնորհութեան յափշտակիչ գեղեցկութեան առջեւ, գրական ու արուեստի ստեղծագործութիւններու պրիսմակային բեկբեկումներու ընդմէջէն:

դաստիարակներ՝ իբր անժխտելի մաս հաւատոյ՝ կը պարտադրէր հաւատացեալները ու աստուածաբանները ընդունելու գայն որպէս անհերքելի վարդապետութիւն եկեղեցւոյ:

«Ես եմ անաբատ յղացեալ»-ը յայտարարած է ինքը Ս. Կոյսը իր տեսիլներուն մէջ, չորս տարի վերջ այն պատմական բուականէն՝ երբ 1854-ին Պիոս Թ. Սուրբ եկեղեցւոյ վեհափառ Հովուապետը բովանդակ քրիստոնեայ աշխարհի առջեւ կը դնէր իր «Անմատելին Աստուած» կոնդակով Անաբատ յղութեան դաւանանքը: Այդ օրէն Ս. Գրքի ու Ս. Հայրերու աւանդութեան մէջ դարձեալ դար փոխանցուած վար-

Այսօր դար մը վերջ՝ այդ յիշատակը կը կրկնուի ու եկեղեցւոյ անսխալ Առաջնորդը եւ Գահակալը կը հրաւիրէ քրիստոնեայ մեծագանգուած համայնքը բոլոր երկիրներու՝ վերապրելու շնորհքի եւ հոգեկան վերանորոգութեան տարի մը:

Սրբազան Քահանայապետին կոչը արձագանգեց արդարեւ լայնածաւալ հորիզոններու վրայ ու եպիսկոպոսներ կազմակերպեցին տօնակատարութիւններ, ուխտագնացութիւններ, եւ աւելի ընդլայնեցին շարժումը՝ աղօթքի, գոհողութեան եւ նուիրումի քեներով մօտեցաւ սրբամաքուր եւ անաբատ Կոյսին, որ աղբիւրն է շնորհքի եւ օրհնութեան, հաստատելով թէ հոսումը աստուածային շնորհքին հաւատացեալ հոգիներու վրայ՝ Ս. Կոյսին

միջոցաւ է որ կ'իջնէ, ինչպէս մարդկութեան փրկագործութեան խորհուրդը իր միջոցով կատարուեցաւ, քանի որ իր անարատ արգանդին պտուղն էր Յիսուս, Փրկիչ աշխարհի:

Մարդկութիւնը որ կը տառապի ցաւերով, կիրքով, աղէտներով եւ անհամար թշուառութիւններով, անշուշտ պիտի մաքրուի եւ պիտի բարձրանայ այն աստե՛ն՝ երբ կառչի հոգեւոր սկզբունքներուն, եկեղեցւոյ ուղղութիւններուն: Պիտի բարձրանայ ու պիտի գործանայ վերջապէս՝ երբ ձեռքաւորի նիւթապաշտութեան մըղձաւանջէն: Ահա թէ ինչո՛ւ Ս. Եկեղեցւոյ Պետը, Օգոստոսիան իշխող Սրբազան Քահանայապետը Պիոս ԺԲ. յոբելինական տարիի մը հանդիսաւորութեամբ կը շարժէ հանուր աշխարհը՝ կեդրոնական շրջանքի, հոգեկան գեղեցկութեան եւ բարձրութեան աւագանին շուրջ:

* * *

«Անարատ տաճար, բնակարան անբաւ Բանին Աստուծոյ, Մարիամ սուրբ Կոյս» կ'երգէ հայկական շարականը: Գեղեցիկ, կուռ ու հոգեւալաց արտայայտութիւն մը իսկապէս, մտքին ծնունդը աստուածաբան հայ վարդապետի մը: Ու ո՛րքան ալ ունինք նման գմայլելի բացատրութիւններ՝ գովաբանելու համար Տիրամայրը:

«Անարատ տաճար» է Ս. Կոյսը, որուն մէջ իջաւ ու մարմին առաւ Սրբութեանց Սուրբը, Բանն Աստուծո: Եւ միթէ կարելի՞ է այլապէս խորհիլ աստուածաբանօրէն: Եթէ Ս. Կոյսը ըլլար ենթարկուած նախածնողներու սկզբնական մեղքին, ըլլար ենթարկուած սատանայի գերիշխանութեան՝ պիտի ըլլա՞ր արժանաւոր օրաբան Աստուածութեան: Անշուշտ ոչ: Այդ բարը «անարատ», իր մէջ կը բովանդակէ մեծագոյն իմաստը եւ գոյութեան պատճառը Ս. Կոյսին, որ ընտրուած էր ընտրուելու մայրը մարդացեալ Աստուծոյ: Տիրամայրը

գերբի Փրկչին արժանապատուութիւնն իսկ գայն կը պահանջէր: Քրիստոսի անսահման արդիւններով փրկուեցաւ մարդկութիւնը եւ ազատեցաւ մեղքին տիրապետութենէն. այդ մեծ գործին մասնակից էր իր Մայրն ալ, անբաժան իրմէ, որ կը ստանար անբաժանութիւն՝ բովանդակելով իր մէջ «Անբաւ»ը:

Տիրամայրը՝ նախասահմանուած հետեւաբար որպէս Մայրը Բանին Աստուծոյ, անհրաժեշտօրէն պիտի ըլլար մաքուր, չենթարկուած սկզբնական մեղքին, անարատ իր գոյութեան առաջին վայրկեանէն, երբ իմացական հոգին կու գար միանալու մարմնոյն եւ կը սկսէր գոյանալ իբրեւ անձ: Նէ ընտրուած այն գերագոյն էակն էր, որ պիտի ընծայէր մարդկութեան՝ Մեսիան, աշխարհի ազատարարը մեղքէն: Դրապէս շնորհագարդ էակ մ'է ուրեմն Մարիամ նախ քան աւետուրը, եւ մնաց միշտ ալ գերազանց բարձրութեան վրայ շնորհքի վիճակին:

Գ ա բ Ր ի Է Լ հրեշտակապետի ողջունատուութիւնը «Ողջոյն քեզ, Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ քեզ» կը յայտնէ լրումը այդ աստուածային շնորհքին՝ որ կը բնակէր արդէն Կոյսին մէջ, ոչ թէ իր ստացական արդիւնքով հասած այդ բարձրութեան, այլ բացառիկ առանձնաշնորհութեամբ Աստուծոյ ամենակարողութեան, գերծ մնալով սկզբնական մեղքէն:

Զմայլելի է եւ լի բանաստեղծութեամբ հայկական եկեղեցւոյ հետեւեալ շարականն ալ, որ կ'երգէ Ս. Կոյսին մաքրութիւնը եւ գերազանց սրբութիւնը.

«Ով գերահաշ ծաղիկ բուրեալ յեղեմայ
Հոռ անմահութեան ծննդոցս Եւայի,
Յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս»:

Մահը մտաւ Եւայով. Ս. Կոյսը՝ Նոր Եւան, նոր նախամայրը մարդկութեան, իբրեւ գերաշնորհ ծաղիկ մը Եղեմին կը ծաղկէր մարդկութեան համար, ծաղիկ

մը՝ որ իր անմահութեան հոտովը կը ծաւալէ կեանք ու կենդանութիւն, կու տայ յոյսը վերելքին՝ բոլոր անոնց համար որ մեղաւոր Եւայէն սերած էին եւ կը տառապէին մեղքի իշխանութեան տակ: Գըրաւիչ ու սխրալի բանաստեղծութիւն արդարեւ, ուր յայտնի է հակադրութիւնը մեղքին ու շնորհքին, անկումին եւ վերականգնումին: Յաջորդ տունը բացատրական է, բայց նոյնքան գեղեցիկ.

«Դու լուծիչ երկանց բարձող անիծից.
Ծագումն արեւու լուսոյն ճշմարտի,
Որով հերքեաւ խաւարն առաջին»:

Երկունքը, ցաւը կը լուծուի Ս. Կոյսով, որ կը ջնջէ միանգամայն մարդկութեան հակատէն այն անէծքը՝ որով կը դատապարտուէր յաւիտեանական կորուստի: Ս. Կոյսն է դարձեալ արեւելքը արդարութեան արեգակին, իրմով կը ծագէր նրշմարիտ յոյսին արեւը, որ փարատեց աշխարհէն խաւարը մեղքին: Պայծառ ու վրնիտ տողեր: Երգը կը վերջանայ աղերսով մը.

«Ըղբեղ ունիմք բարեխօս
Կոյս անհարսնացեալ մայր անարատ Էմմանուէլի,
Տաճար Բանին Հօրն երկնաւորի.
Օրհնութեամբ ըղբեղ մեծացուցանեմք»:

Մեր նախնեաց շարականները լի են ըստուգիւ աշապիսի մարգարտաշար տողերով, որով կարելի է ըսել թէ ունինք առանձին չհնազ գրականութիւն մը, նուիրուած Տիրամօր փառաբանութեան: «Ծառ կեանքի», «աղբիւր կենդանութեան ջուրին», «աղբիւր անսպառ յոյսին», «Սերովքէ հողեղէն», «մարմնաւոր քերովքէ», «երկնի դուռ», «առաւօտ խաղաղութեան եւ արուսեակ գուարթարար», ու այսպէս դեռ անթիւ են այն սփանչելի մակդիրները, քերթողական գիտերը, որով կը պան-

ծացնեն Ս. Կոյսին գերազանց բարձրութիւնը վեր քան ամէն արարածները:

Սակայն բոլոր այն բացատրութիւններուն մէջ, ուր կը տեսնուին անարատ յոյսութեան վարդապետութեան փաստեր ուղղակի կամ անուղղակի, անկարելի է գերանցողակի չյիշատակել հոս վերափոխման տօնին ուրբերորդ օրը երգուած շարականը՝ որ գոհար մ'է իմաստներու, բանաստեղծութեան եւ աստուածաբանական խորութեան.

«Անթառամ ծաղիկ անդառապարտ Հառաւիղ.

Վերարուսեալ յարմատոյն Յեսսեայ,
Ջրեղ Եսայիաս կանխաւ վերադռեաց
Նօթարիին շնորհաց Հոգւոյն ընդունաւ
րան դուռ:

Աստուածածին եւ Կոյս զքեզ մեծացուցանեմք:

Համեղաճաշակ պողոյն բանաւոր բարուսակ,
Յորմէ կթեցաւ մեղ ողկոյզն անըսպառ
Յուրախութիւն տրամեցելոց
Ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան.
Սրբունի անարատ ամենեքեան զքեզ մեծացուցանեմք:

Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք

Այսօր յառաքելոցն ամփոփեալ,
Վերին ակնարկութեամբն վերափոխեցար
յարքայութիւն

Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ,
Բարեխօս խոստովանողացս զքեզ մեծացուցանեմք»:

Աղօթք, պաղք, բանաստեղծութիւն խառնուած են հոս: Առաջին տողն արդէն կը բաւէ կոչելու այս կտորը գմայլելի ապացոյց մը ու հայրերու աւանդութեան նկատմամբ անարատ յոյսութեան դաւանանքին: Ս. Կոյսն է ծաղիկ մարդկութեան,



բայց անթառամ ծաղիկը, որ մահուան ու մեղքի խորշակին տակ բառամած չէ, այլ պահած միշտ իր սրբութեան գեղեցկութիւնը: Ս. Կոյսն է «անդատապարտ շառաւիղ»ը մարդկութեան. միակը որ համայնաչինջ կորուստին ու համաշխարհային դատապարտութեան մէջ կը ներկայանայ սփանջելի բացառութիւն մը, որ չի մտնէր հասարակաց աղէտին եւ բշտառութեան լուծին տակ: Դաւիթ մարգարէի ցեղին պատկանող, այսինքն Յեսէի արմատէն ծլած շառաւիղ մը՝ որ չէ եւրարկուած դատապարտութեան: Զափազանց բացայայտ է առանձնաշնորհութեան ակնարկութիւնը այս բառերուն մէջ: Երգիչը կ'անուանէ դեռ զինքն «ընդունարան Հոգւոյն Սրբոյ եօթնարփեան շնորհքներուն», համաձայն կանխասացութեան Եսայի մարգարէին: Ս. Կոյսն է «բանաւոր բարունակ համեղանաշակ պտղոյն», որ է Քրիստոսի, հակադրուած մահուան պըտուղին. Քրիստոս է «անսպառ ողկոյզը», որ նմեցաւ խաչին վրայ ուրախութիւն պատճառելու համար տրտմեալ հոգիներուն Հին Կտակարանի եւ բոլոր անոնց՝ որ խաչին արիւնովը փրկուեցան եւ եղան որդիներ Աստուծոյ: Երբորդ տունը Ս. Կոյսին մարմնով երկինք փոխադրութեան շնորհքին կ'ակնարկէ: Վերափոխումը պըտուղն էր իր անարատ յղութեանը. գերծըլլալով սկզբնական մեղքի հետեւանքներէն՝ իր մարմինը չէր կրնար ըլլալ որս մահուան եւ փոշիացման: Այսպէս այս փոքրիկ կտորին մէջ գոյգ դաւանանքները անարատ յղութեան եւ անոր կապուած վերափոխման՝ երգուած են եւ ժողովրդականացած հայ եկեղեցւոյ այս շարականովը:

* * *

«Նա սպասեցէ քում զլիտոյ, եւ դու սպասեցես նորա գարշապարի»: Այն երեքական վայրկեանին՝ երբ նախամայրն

Եւա կ'իյնար սատանայի գերութեան տակ եւ կ'ենթարկուէր ծննդական ցաւերու, բշտառութեան, մեղքի տիրապետութեան, հիւանդութիւններու եւ մահուան, Աստուած կ'աւետէր որ պիտի գայ մէկը որ պիտի նզովէ զլուսը մարդկութեան բշտամիին: Այդ մէկը հակադրուած Եւայի՝ Նոր Եւան է, համաձայն ս. հայրերու մեկնութեան: Հոս արդէն նախաձայնուած է անարատ յղացումը եւ Ս. Եկեղեցին դարերով այդպէս հասկցած է, պահպանած իր սրբազան աւանդութեան մէջ ու վարդապետած հաւատացեալ ժողովուրդին:

Քրիստոնէութեան առաջին երեք դարերուն, երբ երկու կարեւոր հարցեր կը կազմէին մտահոգութիւնը եկեղեցւոյ պաշտպան ս. հայրերուն եւ նարաւասն վարդապետներուն, այսինքն Քրիստոսի աստուածութիւնը եւ իրականութիւնը իր մարդկութեան, անուղղակի միայն հպած են անարատ յղութեան դաւանանքին, ներկայացնելով Ս. Կոյսը որպէս Նոր Եւա, նոր մայր մարդկութեան: Նիկիոյ Ս. Ժողովը (325) կեդրոնն է անոնց հաւատքի փաստաբանութեան բովանդակ կորովին. անով կը վերջանան յաղթական ելոյթով մը անոնց աստուածաբանական նուաճումները: Ս. Աթանաս, որ այդ ժողովին ռզին է, Ս. Եպիփան, Ս. Բարսեղ, Ս. Գրիգորներ՝ Նիսացի եւ Նագիանգացի, եւ Ս. Յովհան Ոսկեբերան, կը կազմեն անխախտ հիմքը եկեղեցական աւանդութեան բազմադիմի մոլորութիւններու դէմ, ինչպէս մանիքականութեան, արիոսականութեան, եւն.: Սակայն եւ այնպէս այս ս. հայրերը, ու մանաւանդ Ս. Եփրեմ արեւելի մէջ եւ Ս. Ամբրոսիոս ու Ս. Օգոստինոս արեւմուտի մէջ՝ կը ծանրանան Տիրամօր առանձնաշնորհութեան վրայ, շեշտելով անոր անարատ մաքրութեան վիճակը նախ քան հրեշտակապետին ողջութեան նախնութիւնը եւ բարձրանալը աստուածամայրութեան շնորհքին:

Եփեսոսի ս. Ժողովին (431) է որ քայլ մը աւելի առաջ կ'երթայ հարցը: Ս. Կիրեղ Աղեքսանդրացի, ռզին այդ տիեզերական համագումարին, Ս. Կոյսին աստուածամայրութեան խնդրին կու տայ վերջնական հաստատութիւնը ընդդէմ Նեստորի, Քրիստոսի գոյգ բնութեանց վարդապետութիւնը աստուածաբանական հիմքուն վրայ հաստատելով: Ս. Կոյսը՝ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ է (Θεοτόκος). այդ տիտղոսը կը պարունակէ իր էութեամբ անարատ յղութեան դաւանանքին անհրաժեշտ հիմք. մայրը Բանին Աստուծոյ՝ չէր ըլլար արժանաւոր տանար աստուածութեան՝ եթէ սկզբնական մեղքին արտաքին լիարարած ըլլար մաքրութիւնը եւ սրբութիւնը ապագայ Մօրը տիեզերքի Փրկչին:

Այնուհետեւ կը յաջորդեն ուրիշ վկայութիւններ որ կը դառնան հարցին շուրջ. Թեոդոտոս Անկիւրիացի որ մասնակցած է Եփեսոսի սուրբ ժողովին, Պրոկոպ Կարթագոյնի, Ս. Անատոս պատրիարք Անտիոքի, Ս. Անդրէաս Կրետապոլիսի, Ս. Գերմանոս պատրիարք Բիւզանդիոնի եւ այսպէս մինչեւ Ս. Յովհաննէս Դամասկացի արեւելի մէջ, եւ Եպիփանոսներ ու աստուածաբաններ զանազան շրջաններուն արեւմուտի մէջ՝ լոյսնայն կամ յայտնապէս կը դաւանին իրենց նախնիներուն կամ սրբազան երգերուն մէջ պատշաճութիւնը Ս. Կոյսին առանձնաշնորհութեան, որպէս պայման անհրաժեշտ իր աստուածամայրութեան: Բիւզանդիոնի եկեղեցւոյն մէջ արդէն յաջորդ դարերուն հետգիտէ կը սկսին Ս. Կոյսին ուրիշ տօներու հետ, ինչպէս Տեառնդառաջի, Ծննդեան, Ննջման կամ Վերափոխման, որոնք աւելի հին ժամանակի մը կը պատկանին, նաեւ տօնախմբութիւնը Անարատ յղութեան: Այսպէս ընդհանուր եկեղեցւոյ մէջ, ըլլա՛յ Արեւելի, ըլլա՛յ Արեւմուտի, աւանդութեան ձայնը կը հիմնադրուի ե-

կեղեցական իշխանութեանց վնիւններով, հրահանգներով, որոշողութեամբ: Կը հասնին վերջին ժամանակները, Պիոս Թ. Քահանայապետին կոնդակը, երբ նա յետ աստուածաբանական բնութիւններու եւրարկելու վերջին անգամ մըն ալ Ս. Գրիգոր Եւ աւանդութեան վկայութիւնները եւ յետ գումարելու Եպիփանոսաց ժողովը, որուն կը մասնակցին նաեւ Հիւրմիւզեան երկու արքեպիսկոպոսները Միսիքարի Տունէն՝ 1854, Դեկտեմբեր 8-ին հանդիսաւոր կերպով կը յայտարարէ բոլոր կաթողիկէ եկեղեցիներուն համար որպէս անսխալ ունիւստութիւն եւ դաւանանք (dogme) Անարատ Յղութեան վարդապետութիւնը:

* * *

1953, Դեկտ. 8-ին վերստին Եկեղեցւոյ Քահակալին հետ, հարիւր տարի յետոյ, տօնական զանգակներու ոգովանջին ներդաշնակութեան ընդմէջէն բարձրացան ցնձագին աղօթքներ դէպի Անարատ Յղացեալը, դէպի Կուսական Ամբիծ մաքրութիւնը սրբասնեալ Մօր Աստուծոյ, հայցելու գրութիւնը Ամենակալին, հայցելու սէր ու շնորհք մարդկութեան վրայ:

Յորելիական բովանդակ տարւոյն ընթացքին կ'աղօթէ Ս. Եկեղեցին, կ'աղօթեն բոլոր հաւատացեալները որպէսզի վերանորոգուի մարդկութիւնը եւ կատարէ կատարեալ դարձ մը դէպի Քրիստոսի ունիւստութիւնը, որոնց վրայ միայն հաստատուած է իրական խաղաղութիւնը եւ երջանկութիւնը աշխարհի:

«Բաղձալէպ»-ի ներկայ ԲԱՅԱՌԻԿԸ կը դնէ ընթերցողներուն առջեւ սիրոյ եւ հիացման գրաւոր արտայայտութիւնը գերամաքուր եւ հրաշափառագոյն Տիրամօր՝ Հայ Արուեստի եւ լեզուի այս համեստ յուշարձանով:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ